ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ռումանահայ թեմի առաջնորդ Բարձրապատիվ Տ. Վազգեն Ծ. Վարդապետ Պալճյանի 1948 թվի դեկտեմբերի 20-ի ներկայացրած հայտարարության, ինչպես նաև Թեմական Դատական Ատյանի զեկուցագրի համաձայն, Ռումանի հայ եկեղեցու ծխատեր և Պաքրուի ու Ցաշի համայնքների այցելու հովիվ Տ. Տաճատ քահանա Մելքոնյանը իր կովասեր և շահամոլ վարքագծով վարկաբեկում է հայ եկեղեցականի հեղինակությունը, իսկ վերջերս գժտվելով թաղական խորհուրդների հետ, փոխանակ խնդիրների լուծումը Թեմական խորհրդին հանձնելու, հակառակ եկեղեցու կարգ ու կանոնին, դիմել է Պետական Դատախազության զրպարտիչ անբաստանագիրներով և վարկաբեկել ու նսեմացնել Հայ Եկեղեցու հեղինակությունը։ Նա փորձել է ժխտել Հայ Եկեղեցու անկախ գոյության իրավունքը Ռումանիայում և նորա իշխանությունը, առաջարկելով ենթարկվել այլ եկեղեցու։

Նկատի առնելով Ազգընտիր Գերագույն Հոգևոր Խորհրդի՝ Ռումանահայ Թեմից ուղարկված զեկուցագրերի հիման վրա Տ. Տաճատ քահանայի մասին տրված զեկուցումը, 1949 թվի հուլիսի 22-ի Հայրապետական կոնդակով, ի գիտություն հայ ժողովրդյան և ի գործադրություն թեմական հոգևոր իշխանության, Ռումանիո թեմի Ռոման քաղաքի ծխատեր հովիվ՝ Տաճատ քահանա Մելքոնյանը կարգալույծ է արվել։

Իր անվայել ընթացքի և քրեական հանցագործության համար կարգալույծ է արված նույնպես նույն թեմի Բաբգեն քահանա Քերոբյանը։

***

1949 թվի հուլիսի 5-ի Հայրապետական կոնդակով՝ Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի միացյալ թեմերի առաջնորդական Փոխանորդ է կարգվել Բարձրապատիվ Տ. Կարապետ վարդապետ Ասլամազյանը։

Նորին բարձրապատվությունը հուլիսի կեսերին մեկնել է Նոր-Նախիջևան և մեծ նվիրվածությամբ ու եռանդով ձեռնամուխ է եղել իր պատասխանատու աշխատանքին։ Իր պաշտոնավարության այս կարճ ժամանակամիջոցում նա կարողացել է շրջագայել իր թեմերի բոլոր քաղաքներն ու գյուղերը և այցելել հայ համայնքները։

Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը արձանագրելով այդ մասին իր գոհունակությունն է հայտնում բարձրապատիվ Տ. Կարապետ վարդապետին՝ նվիրված պաշտոնավարության համար։

***

Ամերիկահայ հայրենասեր Տ. Գավուքճյանը Մայր Աթոռի համար նվեր է ուղարկել ցինկոգրաֆիայի գործիքներ, որոնց կապակցությամբ ամենայն Հայոց Հայրապետը ուղարկել է հետևյալ գրությունը. (բերում ենք քաղվածաբար)։

Պատվարժան Տիար Հայկա Գավուքճյան, հարազատի Մայր Աթոռոո Ս. Էջմիածնի և սիրելվո Մերում՝ ողջույն հայրական և օրհնություն Հայրապետական:

Ամերիկահայ հայրենադարձների երկրորդ կարավանի հետ Ձեր ուղարկած հինգ արկղ ցինկոգրաֆիայի գործիքներն ու կազմածները անկորուստ ու լրիվ ստացանք և նկատի առնելով նրանց նպատակահարմար օգտագործելու անհրաժեշտությունը, նվիրեցինք Պետական Հրատարակչության տպարանին...

Հաղորդելով վերոհիշյալի մասին, հայտնում ենք Մեր գոհունակությունը և շնորհակալությունը Ձեր նվիրատվության համար, միանգամայն վստահ լինելով, որ Էջմիածինն ևս, պատեհ ժամանակին, կստանա փոքր ցինկոգրաֆիա...

Շատ ուրախ ենք, որ Դուք ոչ միայն Ձեր սամերով, այլ, ընդհանրապես Հոգեվոր Ճեմարանի վիճակով էք հետաքրքրվում։ Հոգևոր Ճեմարանը այսօր ունի և՛ դրական

և բացասական կողմեր. դրական է՝ ճեմարանի սաների կրթական վիճակը՝ նոցա նը-փիրվածությունը Հայրենիքին և Եկեղեցուն, նոցա՝ ճեմարանի հիմնական նպատակին ծառայելու պատրաստակամությունը և այլն։ Բացասական է իր տնտեսական խախուտ վիճակով, որը հետևանք է մի կողմից տպարանի նվիրատու Տիար Մկրտիչ Մարլյանի ցարդ իր խոստումը չկատարելուն, որի հետևանքով Վանքը զրկվեցավ բավական խոշոր եկամուտից, որ ճեմարանի պահպանության համար կարևոր միջոց կլիներ այսօր, մինչև նորա պահպանության համար հաստատուն հիմքեր կստեղծվեին։ Իսկ մյուս կողմից, մեր Առաջնորդներից ոմանք ոչ սրտացավ վերաբերմունք են ցուցաբերում ճեմարանի ապահովության գործին։ Այս մասին շուտով ընդարձակ շրջաբերական գրություն կուղարկվի նոցա, որի մասին փրատեկ կլինեք Դուք իր ժամանակին...

Մեզ համար, ինչպես և Հոգևոր ճեմարանի բոլոր բարեկամների համար մեծ ուրախություն է, որ այս տարի առաջին լսարանի հինգ լավագույն ուսանողներ խնդրամատույց եղան սարկավագ ձեռնադրվելու և Ս. Էջմիածնի միաբան դառնալու։ Ի մեծ մխիթարություն Ձեզ պիտի հայտնեմ, որ Ձեր սաներից Մովսես Ղազարյանը ձեռնադրվող հինգ սարկավագներից մեկն է։ Կան նաև այլ երկու խնդրատուներ, որոնց խնդիրը ընդունել ենք, բայց ձեռնադրությունը հետաձգել ապագային։ Նոր ձեռնադրվող սարկավագների նկարը և նոցա մասին փոքր հոդված լույս է տեսել «ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագրում։ Սարկավագների ձեռնադրությունը տեղի ունեցավ Ս. Էջմիածնի տոնին։

Հարգանաց ողջունիվ և Տիրավանդ օրհնությամբ՝

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

***

Մայիսի 26-ին, Համբարձման տոնի օրը, Մայր Տաճարում ս. պատարագ մատուցվեց։ Ներկա էր Վեհափառ Կաթողիկոսը, ամբողջ միաբանությունը, ճեմարանի աշակերտությունը և հավատացյալների հոծ բազմություն։

Հայրապետական մաղթանքից առաջ Տ. Սահակ ծ. վարդապետը խոսեց 500 տարի առաջ Հայրապետական Աթոռի տեղափոխության մասին Սսից Ս. Էջմիածին՝ նշելով այդ իրադարձության պատմական նշանակության և ներկա երկու կաթողիկոսարանների միջև ստեղծված համերաշխ, սիրով ու եղբայրական գործունեությունը։

***

Հունիսի 13-ին, Հռիփսիմեանց տոնի օրը, Ս. Հռիփսիմեի վանքում ս. պատարագ մատուցվեց միաբանության, ճեմարանի աշակերտության և հավատացյալ բազմության ներկայությամբ։

Պատարագիչն էր Մ. Տաճարի դասապետ Տ. Նիկողայոս ավ. քահ. Բալեյանը։

***

Հունիսի 14-ին ս. Գայիանեի վանքում պատարագիչն էր Մ. Տաճարի դասապետ Տ. Խորեն ավ. քահ. Շուշանյանը, իսկ հունիսի 16-ին Հողակաթի վանքում պատարագիչն էր Տ. Մկրտիչ քահ. Մկրտչյանը։

Տոնական օրերին, պատմական այդ վանքերում հավաքվել էր հավատացյալների բավականին մեծ բազմություն։

***

Հունիսի 18-ին, Ս. Գրիգոր Լուսավորչի տոնի օրը, Մ. Տաճարում ս. պատարագ մատուցվեց։ Սախատոնակին Վեհափառ Հայրապետի հրամանով, հյուսիսային խորանից հանվեց Ս. Գրիգոր Լուսավորչի աջը, որը և դրվեց Ըզման սեղանի առաջ ի համբույր հավատացյալների։

Ս. պատարագին Ս. Էջմիածնի նշանակության և կատարած դերի մասին խոսեց Տ. Սահակ ծ. վարդապետը։

Հունիսի 19-ին, Կաթուղիկե Ս. Էջմիածնի տոնի օրը Մ. Տաճարում հանդիսավոր ս. պատարագը մատուցեց դեր. Տ. Կարապետ եպիսկոպոսը, որը Վեհափառ Հայրապետի հրամանով սարկավագության աստիճան շնորհեց ճեմարանի 2-րդ լսարանի ուսանողներից հինգ հոգու։

Ձեռնադրությունից հետո սրբազան հայրը ճառով դիմեց նորընծա սարկավագներին և շնորհավորելով աստիճանները, որոշ պարտականություններ և թարեմաղթություններ արավ։

Ի պատիվ նորընծա սարկավագների, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, հյուրասիրություն տեղի ունեցավ միաբանության և ճեմարանի ուսուցչական կազմի հետ։

Ձեռնադրվող սարկավագներն էին՝ Քաջիկ Գևորգյան, Ռուբեն Մարտիրոսյան, Մովսես Ղազարյան, Անդրանիկ Գալեմդարյան և Իգնատիոս Մարտիրյան։

***

Հուլիսի 7-ին, Ս. Սահակ և Մեսրոպ թարգմանչաց տոնի օրը, Օշականի եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Նիկողայոս ավ. քահ. Բալեյանը մեծ բազմության ներկայությամբ։

Ըստ ավուր պատշաճի ոգեշունչ քարոզ խոսեց Տ. Կարապետ վարդապետ Ասլամազյանը։

***

Հուլիսի 10-ին, Վեհափառ Հայրապետի օծման չորրորդ տարեդարձի օրը Մ. Տաճարում ս. պատարագ մատուցվեց։ Պատարագիչն էր Տ. Կարապետ վարդապետը։

Հայրապետական մաղթանքի հանդիսադիրն էր Տ. Սահակ ծ. վարդապետը, որը և մաղթանքից առաջ խոսեց հայ Հայրապետության նշանակության մասին, մի շարք հայրապետների կատարած գործերի և դրվատեց ներկայիս Գեորգ Զ-րդ Կաթողիկոսի կարևորագույն այն գործերը, որը Վեհափառ Հայրապետի գործունեության թագն ու պսակն են հանդիսանում։

Մաղթանքից հետո հավատացյալները ծընկաչոք համբուրեցին Վեհափառ Հայրապետի ս. աջն և շնորհավորեցին նրան։

Վեհափառ Հայրապետի հրավիրանոք Վեհարանում տեղի ունեցավ հյուրասիրություն, Վեհափառ Հայրապետի, միաբանության և ճեմարանի ուսուցչական կազմի ներկայությամբ, որտեղ ներկաները որոշ բարեմաղթություններ արին Վեհափառ Հայրապետին։

***

Հուլիսի 22-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Տ. Սահակ ծ. վարդապետի, մեկնեց Գեղարդայ վանքը։ Սահակ ծ. վարդապետը տանում էր Ս. Գեղարդը՝ ամառը Գեղարդայ վանքում թողնելու ի համբույր ուխտավորների։

Վանահայր Տ. Եղնիկ վարդապետը, մեծարատանի միաբանության հետ, շուրջառած սպասում էին վանքի դարբասից դուրս, որտեղ Վեհափառ Հայրապետը շուրջառ առնելով, շարականների երգեցողության ու զանգերի զողանջյունով առաջնորդվեց Գեղարդայ վանքը։

Գեղարդայ վանքում հայր Եղնիկի ողջույնի խոսքից հետո, Վեհափառ Հայրապետը օրհնեց ամենին։ Միաբանությունը՝ և ուխտավորները արժանացան նորին ս. օծության ս. աջին։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը, բավական ուշ, իրեն ուղեկիցներով վերադարձավ Մայր Աթոռ։

***

Հուլիսի 24-ին, Վարդավառի տոնի օրը, Մայր Տաճարում պատարագիչ էր Սահակ ծ. վարդապետը, որը և ավուր պատշաճի քարոզ խոսեց։

***

Հուլիսի 25-ին, Մայր Աթոռ ժամանեցին ՍՍՌՄ կերպարվեստագետների մի խումբ՝ Ստալինյան մրցանակի լաուրեատ ՍՍՌՄ Գեղարվեստական ակադեմիայի պրեզիդենտ Ա. Գերասիմովի գլխավորությամբ, որոնք դիտեցին Տաճարը և թանգարանը։

Իրենց այցելության մասին տպավորությունները արձանագրեցին այցելուների մատյանում։

***

8-ին օգոստոսի, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսի, մեկնեց Կիսլովոդսկ՝ բժշկության համար։

***

Սեպտեմբերի, խաչվերացի օրը, Մ. Տաճարում ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն ավ. քահանա Շուշանյանը։

Երեկոյան ժողովրդի մեծ բազմության ներկայությամբ Տաճարի շուրջը կատարվեց թափոր։

***

24-ին սեպտեմբերի, Ս. Գևորգի տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Կարապետ արքեպիսկոպոսը, որը և քարոզեց։ Հայրապետական մաղթանքից հետո Վեհարանում հյուրասիրություն տեղի ունեցավ միաբանության, ճեմարանի ուսուցչական կազմի և հյուրերի համար։

Սեղանին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Սեպտեմբերի 25-ին, Վարագայ խաչի օրը, Մ. Տաճարում ս. պատարագ մատուցվեց։

***

Հոկտեմբերի 22-ին Մայր Աթոռ ժամանեց Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Տ. Վահան արքեպիսկոպոսը։

***

Նոյեմբերի 6-ին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր ս. պատարագ մատուցվեց։ Պատարագիչն էր Տ. Մկրտիչ քահանան։ Ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, կատարվեց կառավարական մաղթանք։ Տաճարը լի էր աղոթողների բազմությամբ։

***

Ռումինիայի թեմի առաջնորդ Բարձրապատիվ Տ. Վազգեն ծ. վարդապետ Պալճյանի և «Հայաստանյան ճակատ» կազմակերպության նախաձեռնությամբ, Ռումանիո հայ հավատացյալ համայնքը Երևանում կառուցվող կաթողիկոսական վիլլայի շինության համար նվիրաբերել է երկու հարյուր խորանարդ մետր ատաղձ, որն արդեն ստացվել է Երևանում և հանձնվել գործադրության։

***

«Էջմիածին» պաշտոնաթերթի հրատարակությունը կանոնավորելու համար նորին Ս. Օծության հաճությամբ պաշտոնաթերթի խմբագրության մեջ աշխատակցելու համար հրավիրված է պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր հայագետ Ա. Աբրահամյանը։